



Հայաստանի շախմատի ֆեդերացիայի
Առաջին տեղակալ
Ս. Լպուտյան

**ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ 8-ՐԴ ԽԱՂԵՐԻ
ՇԱԽՄԱՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

Համահայկական ամառային 8-րդ խաղերի շախմատի առաջնությունը կանցկացվի քաղաք Երևանում, օգոստոսի 7-ից 10-ը Ա (տղամարդիկ) և Բ (կանայք) խմբերով:

Մրցումների մասնակիցների վարկանիշը չպետք է գերազանցի տղամարդկանց համար 2300-ը, կանանց համար 2250-ը (մայիսի 1-ի վարկանիշային աղյուսակի դրությամբ):

Մրցաշարերը անցկացվում են շվեյցարական մրցակարգով՝ 9 խաղափուլով:

Մրցաշարերում 1-3-րդ տեղերը գրաղեցրած մասնակիցները կպարգևատրվեն մեդալներով:

Մրցաշարերին մասնակցելու իրավունք ունեն՝ Երևանից 5-ական, Գյումրիից 4-ական, Վանաձորից 4-ական, Հայաստանի մնացած քաղաքներից և համայնքներից 3-ական շախմատիստներ յուրաքանչյուր խմբում: Սկիզբառային շախմատիստների մուտքն ազատ է:

Ժ Ա Մ Ա Կ Ա Ր Գ

15 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 5 վայրկյան հավելումով:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցաշարերում տեղերը կորոշվեն.

- ա) հատված Բուխհոլցի (-1) գործակցի,
- բ) Բուխհոլցի գործակցի,
- գ) ըստ անձնական հանդիպման (հանդիպումների) արդյունքի,
- դ) ըստ սև գույնի խաղաքարերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի:

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

Օգոստոսի 7 – ժամանում

Օգոստոսի 8, 14:30 – բացման արարողություն

Օգոստոսի 8, 15:00 – 1-ի խաղափուլ

Օգոստոսի 8, 16:00 – 2-րդ խաղափուլ

Օգոստոսի 8, 17:00 – 3-րդ խաղափուլ

Օգոստոսի 9, 15:00- 4-րդ խաղափուլ

Օգոստոսի 9, 16:00- 5-րդ խաղափուլ

Օգոստոսի 9, 17:00- 6-րդ խաղափուլ

Օգոստոսի 10, 15:00- 7-րդ խաղափուլ

Օգոստոսի 10, 16:00- 8-րդ խաղափուլ

Օգոստոսի 10, 17:00- 9-րդ խաղափուլ

Օգոստոսի 10, 18:30 – փակման արարողություն

ԳՐԱՆՑՈՒՄ

Հայտերն ընդունվում են մինչև օգոստոսի 1-ը, ժամը 18:00-ն:

Համահայկական ամառային 8-րդ խաղերի շախմատի առաջնությունը կանցկացվի Տիգրան

Պետրոսյանի անվան շախմատի տուն-մարզադպրոց /հասցե՝ Խանջյան 50, հեռ. 010 554647/: